ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՎԻԵՆՆԱ, ՄՅՈՒՆԽԵՆ, ՖՐԱՆԿՖՈՒՐՏ ԵՎ ՓԱՐԻԶ

Նորին Սրբություն Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետը սույն թվականի ապրիլի **22-ից մինչև մայիսի 25-ը** Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պատվիրակ Տ. Մեսրոպ ծայրագույն վարդապետ Գրիգորյանի, Ավստրիայի և Արևմտյան Գերմանիայի հայ եկեղեցական համայնքների ու Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ Տ. Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյանի հրավերներով հովվապետական այցելություն տվեց Վիեննա, Մյունխեն, Ֆրանկֆուրտ և Փարիզ:

Հայոց Հայրապետին ուղեկցում էին Ծիրակի հայոց թեմի առաջնորդ Տ. Նարեկ եպիսկոպոս Շաքարյանը և Մայր Աթոռի միաբան ու «Էջմիածին» ամսագրի խմբագրության քարտուղար Տ. Զատիկ աբեղա Ավետիքյանը՝ որպես գավազանակիր:

ՄԵԿՆՈՒՄ ՄՈՍԿՎԱ

Ապրիլի 20-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 8.30-ին, Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվում է Մայր տաճար:

Ողջ միաբանությունը միախորհուրդ աղոթում է Նորին Սրբության բարի և խաղաղ ուղևորության համար:

Աղոթքից հետո Մայր Աթոռի միաբանության անունից Վեհափառ Հայ-

բապետին ուղղյալ բարի ճանապարհորդության մաղթանքի խոսք է ասում Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը:

Երևանի «Զվարթնոց» օդակայանում Վեհափառ Հայրապետին բարի ճանապարհ են մաղթում Մայր Աթոռի միաբանությունը՝ գլխավորությամբ Տ. Սիոն արքեպ. Մանուկյանի, Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Արսեն եպս. Բերբերյանը և Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, նաև մայրավանքի պաշտոնեությունը:

Օդակայանում Վեհափառ Հայրապետին բարի ճանապարհ է մաղթում նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ռ. Պարսամյանը:

ԺԱՄԱՆՈՒՄ ՄՈՍԿՎԱ

Երկու և կես ժամ տևող թռիչքից հետո օդանավը վայրէջք է կատարում Մոսկվայի Վնուկովոյի օդակայանում:

Վեհափառ Հայրապետին դիմավորելու համար օդակայան էին եկել Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Տ. Տիրան վրդ. Կյուրեղյանը և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր կրոնական պաշտամունքների խորհրդի ներկայացուցիչ տիար Էդվարդ Գալստյանը:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Մոսկվայի «Սովետսկայա» հյուրանոց, որտեղ երկու օր մնալուց հետո, մեկնում է Վիեննա:

ԺԱՄԱՆՈՒՄ ՎԻԵՆՆԱ

Ապրիլի 22-ին, չորեքշաբթի օրը, առավոտյան ժամը 10.30-ին, Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով Մոսկվայի «Շերեմետևո—2» օդակայանից մեկնում է Վիեննա, ուր խանդավառ մթնոլորտում դիմավորում և բարի գալուստ են մաղթում Ավստրիայի Արքեպիսկոպոս, կարդինալ Ֆրանց Քյոնիգը, Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պատվիրակ Տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը, Վիեննայի հայոց Ս. Հռիփսիմե եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Արել աբդ. Օղլուգյանը, Վիեննայի հայ եկեղեցական վարչության ատենապետ Աստիկ Աստվածատուրյանը, հայկական միությունների ներկայացուցիչները և բազմաթիվ վիեննաբնակ հայեր:

Վեհափառ Հայրապետին դիմավորելու էին եկել նաև Վիեննայի Մխիթարյան միաբանության հայրերը՝ ի գլուխ աբբահայր հայր Գրիգորիս Մանյանի:

Օդակայանի պատվո հյուրերի ընդունելության սրահում ողջույնի և բարիգալստյան խոսքերի փոխանակումից հետո Վեհափառ Հայրապետը մեքենաների շարասյունով առաջնորդվում է Վիեննայի «Իմպերիալ» հյուրանոց:

«ՊՐՈ ՕՐԻԵՆՏԵ»-Ի ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆԸ՝ Ի ՊԱՏԻՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Նույն օրը, երեկոյան ժամը 19-ին, Ավստրիայի Արքեպիսկոպոս Նորին Գերազանցություն կարդինալ Ֆրանց Քյոնիգը, ի պատիվ Ամենայն Հայոց



«ՊՐՈ ՕՐԻԵՆՏԵ»-Ի ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ. ՎԻԵՆՆԱ

Վեհափառ Հայրապետի, «Պալավիչինի» պալատում կազմակերպում է ջերմ ընդունելություն՝ կաթոլիկ Եկեղեցու «Պրո Օրիենտե» Հաստատության հետ:

Ընդունելությանը ներկա էին «Պրո Օրիենտե»-ի նախագահ դոկտ. Թեոդոր Փիֆֆլ Պերչևիչը, «Պրո Օրիենտե» կազմակերպության բազմաթիվ հոգևորական և աշխարհական անդամները, Վիեննայի կաթոլիկական Ս. Ստեփանոս Մայր տաճարի վանահայր Ֆրանց Յախիմ արքեպիսկոպոսը, Վատիկանի արտաքին հարաբերությունների քարտուղարության ներկայացուցիչ հայր Ժան Դոփրենը, Քենթրբերիի Արքեպիսկոպոսարանի արտաքին հարաբերությունների դիվանապետ հայր Մայքլ Մուրը, Վիեննայի Մխիթարյան միաբանության աբբահայր հայր Գրիգորիս Մանյանը, Վիեննայում Ռուս Օրթոդոքս Եկեղեցու ներկայացուցիչ Իրենեյ արքեպիսկոպոսը, Սերբ Օրթոդոքս Եկեղեցու Դրագո Գովեդարիչա քահանան, Ռումին Օրթոդոքս Եկեղեցու ավագերեց դոկտ. Մարին Բրանիշթեն, Բուլղար Օրթոդոքս Եկեղեցու ավագերեց պրոֆ., դոկտ. Նիկոլայ Շիվարովը, Ղպտի Եկեղեցու երեց Հովհաննես էլ-Բարամուսին, Սիրիական Եկեղեցու երեց Այդին Էմանուել Այդինը, Ավստրիայի կրթական և մշակութային մինիստրության տնօրեն դոկտ. Կառլ Անդեռլը, Ավստրիայում Սովետական Միության դեսպանատան քարտուղար Ալյաբևը, Վիեննայի համալսարանի Արևելյան Եկեղեցիների աստվածաբանության պրոֆեսոր, դոկտ. Քրիստոֆ Սութթները, Վիեննայի Ազգագրական թանգարանի տնօրեն պրոֆ., դոկտ. Հանզ Մանդորֆը, ավստրիացի և օտար բազմաթիվ մտավորականներ, Ավստրիայի հեռուստատեսության, ռադիոյի և մի շարք կարևորագույն թերթերի խմբագիրներ ու թղթակիցներ և մեծ թվով հայ համայնքի ներկայացուցիչներ:

Ընդունելությունը ներածական խոսքով բաց է անում «Պրո Օրիենտե»-ի նախագահ դոկտ. Փիֆֆլ Պերչևիչը, որը հարգալից խոսքերով ողջունում է Հայոց Հայրապետի այցելությունը Վիեննա:

«Ավստրիահայ գաղութի մասին» գերմաներեն լեզվով բովանդակալից հետևյալ զեկուցումն է կարդում Տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը:

ՀԱՅԵՐԸ ԱՎՍՏՐԻԱՅՈՒՄ

«Ավստրիայում հայերը առաջին անգամ հաստատվել են 17-րդ դարում: Մեծ մասամբ դրանք վաճառականներ էին: Սկզբնական շրջանին Վիեննայի հայ համայնքը շատ փոքր էր, բայց ժամանակի ընթացքին այն աճեց և բազմացավ: Հայ համայնքի գերակշռող մասը պատկանում էր Հայ Առաքելական Եկեղեցուն: Հետագայում կարևոր փոփոխություններ կատարվեցին նաև նրանց մասնագիտության ասպարեզում: Եթե հայերը սկզբում առավելապես վաճառականներ էին, այսօր սակայն նրանց կարելի է հանդիպել տարբեր մասնագիտություններում՝ իբրև գործարանի բանվորներ, իբրև գորգի և տեքստիլ վաճառատների սեփականատերեր, իբրև բժիշկներ, ինժեներներ, ճարտարապետներ և արվեստագետներ: Ներկայիս Ավստրիայում ապրում են 1000 հայեր, հիմնականում Վիեննայում:

ԱՌԱՋԻՆ ՀԱՅԵՐԸ ՎԻԵՆՆԱՅՈՒՄ

Առաջին հայերը Ավստրիա եկան քաղաքական պատճառներով և միայն կարճ ժամանակով իջևանեցին Վիեննայում, որպես պաշտոնական ներկայացուցիչներ և գործիչներ Հայաստանի ազգային-ազատագրական շարժման:

1045 թվականին Բագրատունիների մայրաքաղաք Անին գրավվեց նախ բյուզանդացիներից և ապա սելջուկներից: Այդ շրջանին սկսվեց մասսայական գաղթը Հայաստանից: Հայ ժողովուրդը փնտրում էր ապահովություն և խաղաղություն օտար երկրներում: Այս արտագաղթը առավել ևս ուժեղացավ 1375 թ., Կիլիկիայի հայ իշխանության անկումից հետո: Որոշ գաղթականներ Ռուսաստանի վրայով անցան Լեհաստան, Հունգարիա, Ռումինիա, Բուլղարիա, մինչև Հունաստան: Իսկ ուրիշներ, դարձյալ Բյուզանդիայով (հետագային Օսմանյան կայսրություն)՝ դեպի Բուլղարիա, Ռումինիա, Հունգարիա, Ավստրիա, ընդ որում՝ Բուլղարիայի, Ռումինիայի, Հարավսլավիայի գաղթականները հիմնականում նույնպես առևտրականներ էին:

Հայ համայնքի նշանակության նվազեցումը, հավանաբար, պետք է համարել հետևանքը ժամանակի քաղաքական փոխված պայմանների:

Մինչ կայսրուհի Մարիա Թերեզայի օրով Վիեննայում հայ համայնքը կորցրել էր իր քաղաքական և նյութական նշանակությունը, սակայն հայ համայնքը վայելում էր Սուչավայում բարեկամությունը Ժոզեֆ Բ կայսրի (1765—80—1790): 1774—1775 թթ. Սուչավայում կար 120 ընտանիք հայ առաքելական համայնք, կենտրոն ունենալով Սուչավա քաղաքը: Մոլդավական իշխանների կողմից հայերը վայելում էին անհրաժեշտ բոլոր առանձնաշնորհները: Նրանք ունեին չորս եկեղեցիներ, երկու քահանա և մեկ դրպրոց: Կենտրոնական զինվորական հրամանատարությունը 1781 թ. հուլիսի 18-ի հրովարտակով Բոկովիայի ժամանակավոր իշխանությանը հաղորդում էր, որ այն հայ ընտանիքները, «որոնք չեն պատկանում ոչ հույն եկեղեցուն և ոչ էլ հայ կաթոլիկներ են, պետք է ազատ կացուցվեն հոգուտ իրենց կրոնի պահպանության»:

Հաջորդ տարվա աշնանը Ժոզեֆ Բ կայսրը եկավ Բուկովինա և անձամբ այցելեց Սուչավայի հայ եկեղեցական համայնքը, որից հետո 1783 թ. հունիսի 19-ին Քցեռնովիում իր իսկ ձեռքով շարադրած գրությամբ կարգադրեց.

«Հայ համայնքը այստեղ, որի ժամասացությանը ես անձամբ ներկա եղա, քիչ տարբերությամբ նույնն է մնացել բոլոր կաթոլիկ հայերի ժամասացության հետ: Արդ, դադարեցնել բոլոր տեսակի կրոնական հետաքննությունները և չխանգարել նրանց կեցությանը, նիստ ու կացին: Նաև պետք է ձգտել, որ ավելի շատ նման մարդիկ այս կողմերը բերվեն»: Կայսերական այս գրության բովանդակությունը հաստատվում է 1783 թ. հուլիսի 4-ի Արքունի ռազմական խորհրդի հրովարտակով: Որով հայ առաքելական եկեղեցական համայնքը օրինապես ճանաչվում է ո՛չ միայն Բուկովինայի տարածքում, այլև ամբողջ կայսրության մեջ: Հավելյալ կերպով 1972 թ. դեկտեմբերի 12-ին պաշտոնապես հայտարարվեց հայ առաքելական եկեղեցական համայնքի անդամների ճանաչումը, իբրև կրոնական հասարակություն, Ավստրիայի «Առաքելական Եկեղեցի» անվան տակ:

ՀԱՅԵՐԸ ՎԻԵՆՆԱՅՈՒՄ 19-ՐԴ ԴԱՐՈՒՄ

ԺԹ դարում Վիեննայում և շրջակայքում ապրում էին շուրջ 100 հայեր: Սա մի փոքր թիվ էր, բայց նրանցից ոմանք զբաղեցնում էին բարձր պաշտոններ: 1886 թ. երբ Համբուրգում Երեմյանը աչքի վիրահատման համար Վիեննա եկավ, հանդիպեց Կարապետ Գույումճյանին, որը պրոֆեսոր էր Վիեննայի համալսարանում «գրաբար» և արաբերեն լեզվի: Այնուհետև նա

ծանոթանում է գորգի վաճառական Զադիկ Պոպովիցին և ծագումով հայ Պարսկաստանի դեսպան Ներիման Խանին: Մինչև 1968 թ. Բաստայում ապրում էր Պոպովիցի տղան՝ սպասքի մեծ վաճառական Վալերյան:

ԺԹ դարի կեսին Վիեննայում հաստատվում են երկու հայեր՝ Բյուզանդ Մանաս և Կարապետ Արթին Դավուդ փաշան (Դավուդյան): Ստամբուլից եկած վաճառական Բյուզանդ Մանասը նշանակվում է 1846 թ. մայիսի 10—11-ին Օսմանյան սուլթանի գլխավոր հյուպատոս: Վերջինիս մահից հետո, 1856 թ. ապրիլի սկզբներին, Վիեննա է գալիս նոր գլխավոր հյուպատոսը՝ Դավուդ փաշան: Նա կաթոլիկ հայ էր՝ ծնված 1816 թ. Ստամբուլում, կրթությունը ստացել էր Բեռլինում: Սկզբում նա աշխատել էր Օսմանյան կայսրության արտաքին գործերի մինիստրությունում, որից հետո՝ Բեռլինում, իբրև գործավար թուրքական դեսպանատանը: 1861 թ. հունիսին լիբանանյան քաղաքացիական կոիվների ավարտին Դավուդյանը նշանակվում է առաջին գլխավոր նահանգապետ լեռնային Լիբանանի: Նա շարունակում է իր այս պաշտոնը մինչև 1868 թ. (Տես Մ. Գ. Գրիգորյան, «Նոր արխիվային փաստաթղթեր Կարապետ Արթին Դավուդյանի՝ լեռնային Լիբանանի առաջին գլխավոր նահանգապետի մասին», «Հանդես ամսօրյա», 1968, էջ 229—42):

Կ. Պոլսի հայոց Ներսես Վարժապետյան պատրիարքի օրով (1874—84) Ավստրիայում Բարձր Դռան ներկայացուցչի միջնորդությամբ ծրագրեր են մշակվում Վիեննայում հայկական եկեղեցու կառուցման համար: Այս ջանքերը մնում են սակայն ապարդյուն: 1896 թ. դեկտեմբերի 10-ին տասնինն հոգուց բաղկացած մի խումբ հայեր կրկին դիմում են Ստորին Ավստրիայի (Նիդոնստերայխ) կառավարությանը՝ ստանալու համար նրա համաձայնությունը անկախ եկեղեցական հայ համայնք կազմելու, որպես տեղական մասնաճյուղ Սուչավայի հայ առաքելական համայնքի: Այս ձեռնարկը ևս մնում է անարդյունք:

Հետաքրքիր է իմանալ, թե հայերը որտեղ էին իրենց ժամերգությունները և այլ կրոնական արարողություններ կատարում: Դեռևս մեր դարաշրջանի սկզբին որոշ հայեր մկրտվում կամ ամուսնանում էին հույն ուղղափառ եկեղեցում: Ժամանակ առ ժամանակ, սակայն, ծիսակատարություններ էին կատարում նաև Սուչավայից եկած հայ հոգևորականները:

ՀԱՅ ԱՌԱՋԻՆ ՄԱՏՈՒՌԸ ՎԻԵՆՆԱՅՈՒՄ

Հաջորդող 10—15 տարիներին Վիեննայի հայ գաղութը ցանկանում էր անպայման ունենալ իր աղոթատեղին: 1912 թ. շուրջ 50 հայեր համախմբվեցին, գլխավորությամբ Արիստակես քհն. Ֆեսլյանի, և հիմնեցին իրենց մատուռը Դոմինկանոր Բաստա № 10 տան վերնահարկում: Այդ բնակարանը պատկանելիս է եղել երեք հայերի, որոնք այնտեղ միասնաբար ղեկավարում էին գորգի մի վաճառատուն: Մատռան պաշտոնական բացումը կատարվում է 1913 թ. հունվարի 19-ին «Սբ. Փրկիչ» անվան տակ:

Մինչև օրս մենք ծանոթ էինք մատռան որոշ հիմնադիրների անուններին միայն: Վերջերս, սակայն, 1981 թ. հունվարին, պատահականորեն Վիեննայի եկեղեցական արխիվում գտա շատ հետաքրքիր մի փաստաթուղթ, որը կարելի է կոչել ծննդյան վկայական Սբ. Փրկիչ մատուռի: Մի փաստաթուղթ է դա, ուր 48 հիմնադիրները արձանագրել են իրենց անունները, այդ թվում նաև՝ Ֆեսլյան քահանան:

Փաստաթղթի բովանդակությունը հետևյալն է.

«Հուշամատյան Սբ. Փրկիչ մատռան հիմնադիրների, Վիեննա, 1912 թ.:
Շնորհիվ արժանապատիվ տեր Արիստակես քահանա Ֆեսլյանի ջանքերի և ստորև արձանագրված հայերի բարեպաշտության և նյութական օգնության, հիմնվեց 1912 թ. դեկտեմբերին Դոմինիկանրբաստա № 10 տան վերնահարկում, Վիեննա առաջին մաս, Սբ. Փրկիչ անվան մատուռը»:

Մատռան առաջին 12 նվիրատուները եղել են.

1. Արմենակ Ասլանյան
2. Երվանդ Զադեյան
3. Տիգրան Փափազյան
4. Գևորգ Աբրահամյան
5. Մակսուդ Հուսենջյան
6. Կարապետ Բոլալյան
7. Միհրան Կարապետյան
8. Սեդրակ Տեր-Մաթևոսյան
9. Արիստակես քհն. Ֆեսլյան
10. Տիգրան Աղաջանյան
11. Գեղամ Ամատունի
12. Էդվարդ Կարապետյան:

Ֆեսլյան քահանան ցուցաբերում է ոչ միայն բարոյական օգնություն, այլև իր հետ բերում է Սուչավայից բազում եկեղեցական սպասքներ, որոնք մինչև այսօր գործածության մեջ են: Ֆեսլյան քահանայի մահից հետո, երբ Արևելյան Եվրոպայի թեմերը դրվեցին Էջմիածնի կաթողիկոսության իրավասության տակ, հաջորդաբար հոգևորականները գալիս էին Ս. Էջմիածնից: Այդ հոգևոր հովիվներից մեկը, որը կարճ ժամանակով մնաց Վիեննայում, եկեղեցական իրավագետ Արսեն եպիսկոպոս Ղլտչյանն էր: 1928 թ. Ռումինիայից Վիեննա եկավ Եղիշե քահանա Ութուջյանը, որը կնոջ մահից հետո վեղար ստացավ և դարձավ վարդապետ: 30 տարիներ շարունակ նա հովվեց Վիեննայի հայ համայնքը: 1959—61 թթ. Մեսրոպ վրդ. Գրիգորյանը հյուրաբար հովվում է Վիեննայի հայ համայնքը, իսկ 1962 թ.՝ նշանակվում որպես մշտական հովիվ:

1920 թ. հետո հայերը կրկին գալիս են Ավստրիայի զանազան երկրներից, և սբ. մատռան շուրջ սկսում է կազմակերպվել համայնքային կյանքը: Նորին Սրբություն Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ը 1957 թ. տնօրինում է, որ Տ. Եղիշե քահանա Ութուջյանը պաշտոնապես ստանձնի նաև Արևմտյան Գերմանիայի հայերի հոգևոր հովվության գործը: Որով և ստեղծվում է Ավստրիայի և Գերմանիայի անկախ հովվությունը: Սկզբում Վիեննան գտնվում էր Արևմտյան Եվրոպայի թեմի՝ Փարիզի Հայրապետական սպատվիրակի իրավասության տակ:

1971 թ. Գերմանիան կրկին միանում է Արևմտյան Եվրոպայի Փարիզի Հայրապետական սպատվիրակությանը, մինչ Ավստրիայի հոգևոր հովվությունը շարունակում է մնալ անկախ: 1980 թ. հունվարի 2-ին Նորին Սրբություն Վազգեն Ա Հայրապետը Իր հմր. 994 կոնդակով հաստատում է Կենտրոնական Եվրոպայի նոր թեմը, որի կազմում են մտնում Գերմանիան, Ավստրիան և Շվեդիան: Վիեննայի Հոգևոր Հովվին շնորհվում է Հայրապետական Պատվիրակի տիտղոսը:

Այս նշանակում է, որ նա ներկայացուցիչն է Նորին Սրբության, առանց համայնքից ընտրված լինելու:

1962 թ. սկզբին Մեսրոպ վարդապետ Գրիգորյանը հաստատվում է Վիեննայում իբրև հոգևոր հովիվ: Հայ համայնքի հարյուրամյա ցանկությունն է եղել ունենալ սեփական եկեղեցի: Այդ նպատակի համար կազմվում է եկեղեցու կառուցման միությունը՝ գլխավորությամբ ատենապետ Սարգիս Կարապետյանի և նոր հոգևոր հովվի:

1964 թ. մարտի 5-ին գնվում է Վիեննայի 3-րդ թաղամասում, Քոլոնիցշասսե 11 համարի տունը իր պատկան հողամասով: Ծրագրված էր բակում եկեղեցի կառուցել: Այդ շրջանին Վիեննա է այցելում Լոնդոնից տիկին Ռոզե Թրիքին (Հռիփսիմե Հալաջյան), Զմյուռնիայում ծնված մի հայուհի, և կատարում է ի հիշատակ իր հանգուցյալ ծնողների՝ Փիլիպպոս և Ոսկի Հալաջյանների եկեղեցի կառուցելու առատաձեռն առաջարկը: 1964 թ. հունիսի 28-ին կատարվում է Վիեննայի հայոց եկեղեցու հիմնարկեքը, որին անձնապես ներկա է լինում նաև թիկին Թրիքին: Հիշատակի համար հիմքի տակ զետեղվում է հայերեն և գերմաներեն լեզուներով գրված մի մագաղաթյա վկայական: Եկեղեցին կառուցվում է ի Հայրապետության Նորին Սրբություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի և ի հոգևոր հովվության Մեսրոպ վարդապետ Գրիգորյանի:

Այդ օրերին, պատահականորեն, հյուրաբար Վիեննայում էր գտնվում Երևանից եկած ճարտարապետների մի խումբ: Դրանցից մեկը՝ ճարտարապետ Էդվարդ Սարաֆյանը, պատրաստակամություն է հայտնում պատրաստելու եկեղեցու նախագիծը: Կարճ ժամանակ անց պատրաստի նախագիծը Վեհափառ Հայրապետի կողմից ուղարկվում է եկեղեցական համայնքին: Նախագծի համաձայն, եկեղեցու կառուցման աշխատանքը հանձնվում է ավստրիացի ինժեներ Վալտեր Դյուրշմիդին: Վիեննայի համայնքի և սփյուռքի շատ հայեր նվիրատվություններով մասնակցում են եկեղեցու կառուցման գործին: Եկեղեցու կառուցման գործում մեծ է Նորին Սրբություն Վազգեն Ա կաթողիկոսի ցուցաբերած բարոյական և նյութական օգնությունը: Վիեննայի Հայոց Սբ. Հռիփսիմե եկեղեցու հանդիսավոր օծումը կատարում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը 1968 թ. ապրիլ 21-ին՝ ներկայությամբ Հայ Եկեղեցու բազում, ինչպես նաև Ավստրիայի պետական և եկեղեցական բարձր ներկայացուցիչների:

Ներկայիս Ավստրիայում, գլխավորապես Վիեննայում ապրում են շուրջ 1000 հայեր, որոնցից հիսուն համալսարանական ուսանողներ եկել են Մերձավոր Արևելքի զանազան երկրներից: 1962 թ. երբ ես հաստատվեցի Վիեննայում, հայ համայնքը բաղկացած էր շուրջ 350 անդամներից: Տնտեսական վերելքի ընթացքին շատ հայեր եկան Վիեննա: Լիբանանյան քաղաքացիական պատերազմից հետո, 1975 թ., Վիեննա ներգաղթեցին բազում հայեր, գերակշռող մասը՝ երիտասարդներ, իսկ հետագային նաև Պարսկաստանից՝ դարձյալ երիտասարդներ և ամբողջ ընտանիքներ, որոնք Ավստրիայում գտան խաղաղություն և ապահովություն:

Հայ առաքելական եկեղեցական համայնքից բացի, որը 1972 թ. դեկտեմբերին կրթական մինիստրության կողմից կրկին ճանաչվեց իբրև անկախ կրոնական համայնք, գոյություն ունեն Վիեննայում հետևյալ կազմակերպությունները.

1. Հայկական Բարեգործական Միություն, 1960 թ.:
2. Հայ Ուսանողական Միություն՝ հիմնադրված վերստին 1960 թ.:
3. Ավստրիո-Հայկական Մշակութային Միություն՝ հիմնված 1975 թ.

հայ-ավստրիական մշակութային կապերը խորացնելու և զարգացնելու համար:

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ԷԿՈՒՄԵՆԻԿ ՇԱՐԺՈՒՄԸ ԱՎՍՏՐԻԱՅՈՒՄ

Հայ Եկեղեցին ցրված է այսօր ամբողջ աշխարհով մեկ: Բնականաբար հայերը փորձում են հյուրընկալող երկրներում չլինել միայն չեզոք բաղաքացիներ, այլև բարեկամական հարաբերություններ են մշակում ժողովրդի կամ ժողովուրդների, Եկեղեցու կամ Եկեղեցիների հետ: Հայ Առաքելական Եկեղեցին էլ ակտիվորեն մասնակցում է Վիեննայում բոլոր էկումենիկ շարժումներին և ժողովական ձեռնարկներին: Իբրև անդամ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Հայ Եկեղեցին սերտ հարաբերությունների մեջ է երկրի ոչ կաթոլիկ եկեղեցիների հետ, իսկ «Պրո Օրիենտե»-ի հիմնադրումից հետո նա նույնքան ջերմ հարաբերությունների մեջ է Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու հետ: Այն չորս հիստերը՝ 1971 թ., 1973 թ., 1976 և 1978 թթ., որոնք կայացան Վիեննայում հին-արևելյան և հռոմեական կաթոլիկ աստվածաբանների միջև, ունեն մնայուն արժեք և նշանակություն, էկումենիկ հարաբերությունների մեր օրերի պատմության համար»:

«Հայ Եկեղեցու մասին» հմտալից զեկուցումով հանդես է գալիս նաև համալսարանի Արևելյան Եկեղեցիների աստվածաբանության պրոֆեսոր, դոկտ. Քրիստոֆ Սուրբները:

Այնուհետև, խոսք առնելով, կարդինալ Ֆրանց Քյոնիգը հայտնում է իր մեծ ուրախությունը, որ Հայոց Հայրապետը, այցելելով Վիեննա, ընդունեց նաև իր հրավերը՝ նախագահելու համար «Պրո Օրիենտե»-ի հանդիսավոր այս հիստը:

Հարգարժան կարդինալը անդրադառնում է նաև Հայ և Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցիների սիրալիր հարաբերություններին և հույս հայտնում, որ հետագայում այդ հարաբերությունները է՛լ ավելի կզարգանան էկումենիկ ոգով:

Հանդիսության վերջում գերմաներեն լեզվով օրհնության և ողջույնի Իր խոսքն է ասում Հայոց Հայրապետը:

Հայոց Հայրապետի ելույթը տպագրվել է «Էջմիածին» ամսագրի սույն համարում, էջ 12:

Վեհափառ Հայրապետի Վիեննա այցելությունը նույն և հաջորդ օրերին լայնորեն արձագանքում են Վիեննայի հեռուստատեսությունը, ռադիոն և մի շարք տեղական կարևորագույն թերթեր:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԱՎՍՏՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Ապրիլի 23-ին, հինգշաբթի օրը, ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը պաշտոնական այցելություն է տալիս Ավստրիայի Հանրապետության նախագահ դոկտ. Ռուդոլֆ Քիրխշլեկներին:

Վեհափառ Հայրապետի և մեծարգո նախագահի միջև տեղի է ունենում մեկժամյա ջերմ և բարեկամական զրույց, որի ընթացքում պրն. նախագահը հետաքրքրվում է հայ ժողովրդի և Հայ Եկեղեցու անցյալի և ներկայի պատմությամբ:

Վերջում Վեհափառ Հայրապետի և հանրապետության նախագահի միջև փոխանակվում են հուշանվերներ:

Այս առթիվ Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Տ. Նարեկ եպս. Շաքարյանը, Տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը, Տ. Զատիկ աբդ. Ավետիքյանը, Տ. Աբել աբդ. Օղլուգյանը և Վիեննայի հայ եկեղեցական վարչության ատենապետ պրն. Աստիկ Աստվածատուրյանը:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՎԻԵՆՆԱՅԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՐԱՆՈՒՄ

Նույն օրը, ժամը 13-ին, Վիեննայի Արքեպիսկոպոս կարդինալ Ֆրանց Քյոնիգը իր Արքեպիսկոպոսարանում կազմակերպել էր ճաշկերույթ՝ ի պատիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի:

Ճաշկերույթի ընթացքում Վեհափառ Հայրապետի և կարդինալ Ֆրանց Քյոնիգի միջև փոխանակվեցին ողջույնի և բարիգալստյան ճառեր ու հուշանվերներ:

Ճաշկերույթին, Վեհափառ Հայրապետի շքախմբից բացի, ներկա էին նաև Վիեննայի Ս. Ստեփանոս Մայր տաճարի վանահայր Ցախիմ արքեպիսկոպոսը, «Պրո Օրիենտե»-ի նախագահ դոկտ. Փիֆֆլ Պերչնիչը, Վիեննայի համալսարանի դասախոս, պրոֆ., դոկտ. Քրիստոֆ Սուտտները և այլ հոգևորականներ:

Ճաշկերույթն անցնում է քրիստոսավանդ սիրո ջերմ մթնոլորտում:

*
* *

Նույն օրը, երեկոյան ժամը 18-ին, Վեհափառ Հայրապետը հյուրանոցի Իր հարկաբաժնում ընդունում է այցելությունը Վիեննայի հայ եկեղեցական վարչության անդամների՝ գլխավորությամբ վարչության ատենապետ Աստիկ Աստվածատուրյանի:

Նորին Սրբությունը, Իր օրհնությունը բաշխելով բոլորին, մաղթում է, որ նրանք շարունակեն նվիրումով ծառայել իրենց Եկեղեցուն և ժողովրդին:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՎԻԵՆՆԱՅԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՎԱՆՔ

Ժամը 19.30-ին Վեհափառ Հայրապետը, ընդառաջելով Վիեննայի Մխիթարյան միաբանության աբբահայր հայր Գրիգորիս Մանյանի հրավերին, այցելում է վանք՝ տալու համար Իր օրհնությունը պատմական այդ Հաստատության ժառանգորդներին: Վանքի մատրան մեջ կատարվող երեկոյան աղոթքից հետո վանքի միաբանական սեղանատանը, ի պատիվ Հայոց Հայրապետի, տրվում է ընթրիք, որին ներկա են լինում նաև բազմաթիվ հրավիրյալներ:

Ընթրիքին ներկա էր նաև կարդինալ Ֆրանց Քյոնիգը:

Ընթրիքի ժամանակ փոխանակվում են ողջույնի խոսքեր, և գործադրվում է գեղարվեստական հայտագիր:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ապրիլի 24-ին, ուրբաթ օրը, կեսօրվա ժամը 13-ին, Ավստրիայի արտաքին գործերի մինիստր դոկտ. Վիլլեբալդ Փահրը կազմակերպել էր ընդունելություն և ճաշկերույթ՝ ի պատիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի:

Ընդունելության ընթացքում Նորին Սրբության և արտաքին գործերի պարոն մինիստրի միջև փոխանակվում են ողջույնի և բարիգալստյան ճառեր և հուշանվերներ:

Ընդունելությանը ներկա էին նաև վարչապետարանի մի շարք աշխատակիցներ, ինչպես նաև կարդինալ Ֆրանց Քյոնիգը, Տ. Նարեկ եպս. Շաքարյանը, Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը, Տ. Զատիկ աբդ. Ավետիքյանը և ուրիշներ՝ շուրջ 14 հոգի:

Ընդունելությունն անցնում է շատ ջերմ մթնոլորտում:

ԱՊՐԻԼՅԱՆ ԵՂԵՌՆԻ 66-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ԱՌԹԻՎ ՀԻՇԱՏԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄ

Երեկոյան ժամը 18-ին Վիեննայի հայոց Ս. Հռիփսիմե եկեղեցում Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվում է հոգեհանգստյան մասնավոր պաշտոն՝ 1915 թվականի Ապրիլյան Եղեռնի շուրջ երկու միլիոն հայ նահատակների հիշատակին:

Ժամը 19-ին Վիեննայի «Փրելաթը Զաալ»-ի հանդիսությանց սրահում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում Ապրիլյան Եղեռնի նահատակների հիշատակին նվիրված հուշահանդես:

Հանդիսությանը ներկա են լինում նաև ավստրիացի բազմաթիվ հյուրեր:

Երեկույթի բացմանը հայերեն և գերմաներեն հուզիչ խոսքերով հանդես են գալիս Տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը և Վիեննայի եկեղեցական վարչության ատենապետ պրն. Աստիկ Աստվածատուրյանը:

«Աշխարհի ժողովուրդների պայքարը ցեղասպանության դեմ» իրավաբանական վերլուծական բովանդակալից զեկուցումով հանդես է գալիս Ավստրիայի ազգային խորհրդարանի երեսփոխան պրոֆ., դոկտ. Ֆելիքս Էրմաքորան:

Երեկոյի ընթացքում գործադրության է դրվում նաև գեղարվեստական կոկիկ մի ծրագիր: Դաշնակահար Ավո Գոյումջյանը կատարում է Կոմիտաս վարդապետի «Գարուն ա» և «Ծիրանի ծառ» ստեղծագործությունները: Ռազմիկ Հարություն-Թամրազյանը արտասանում է Հովհ. Թումանյանի «Հոգեհանգիստ» բանաստեղծությունը, իսկ «Ի վերին Երուսաղէմ» հոգեհանգստյան շարականի երգեցողությամբ հանդես է գալիս Ալբերտ Խաչեսարյանը:

Գեղարվեստական բաժնի ավարտին ելույթ է ունենում ավստրիացի ասմունքի ծանոթ վարպետ պրոֆ. Գերհարդը և կատարում Սիամանթոյի «Պարը», Սիլվա Կապուտիկյանի «Մայրենի լեզու» բնաստեղծությունները գերմաներեն թարգմանությամբ և հատվածներ Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրերը» վեպից: Սգո հանդեսը եզրափակվում է Հայոց Հայրապետի ելույթով (Տես «Էջմիածին» ամսագրի սույն համարը, էջ 16):

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՔԼՈՍՏԵՐՆՈՅԲՈՒՐԳԻ ՎԱՆՔ

Ապրիլի 25-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը, ուղեկցությամբ Իր շքախմբի, այցելում է Քլոստերնոյբուրգի վանք, որտեղ ջերմորեն դիմավորվում է վանքի միաբանության կողմից:

Հավարտ Մայր տաճարում էկումենիկ աղոթքի, վանքի շրջափակին և

Լեոպոլդ իշխանի ուխտատեղիին ծանոթանալուց հետո, ժամը 12.30-ին, ի պատիվ Հայոց Հայրապետի, տրվում է ճաշկերույթ:

Սեղանի շուրջ Հայոց Հայրապետի և վանահոր միջև փոխանակվում են ողջույնի և բարիգալստյան ճառեր ու հուշանվերներ:

Ընդունելությունն անցնում է եղբայրական ջերմ մթնոլորտում:

*
* *

Նույն օրը, երեկոյան ժամը 18-ին, Վիեննայի հայոց Ս. Հռիփսիմե տաճարում, նախագահությամբ Վեհափառ Հայրապետի, կատարվում է Կիրակամտի ժամերգություն:

ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ՝ ՆՎԻՐՎԱԾ Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 75-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ

Երեկոյան ժամը 19.30-ին Վիեննայի բուլղարական մշակութային միության կենտրոնի դահլիճում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում հանդիսություն՝ նվիրված Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության կազմավորման 75-րդ տարեդարձին:

Հանդիսությունը կազմակերպել էր Հ. Բ. Ը. Միության Վիեննայի մասնաճյուղը:

Բացման խոսքով հանդես է գալիս Արթուր Մելիք-Զհանյանը:

Հ. Բ. Ը. Միության 75-ամյա գործունեության մասին բովանդակալից զեկուցումներով ելույթ են ունենում Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պատվիրակ Տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը և ինժեներ Վալթրաուն Թորոսյանը:

Երեկոյի ընթացքում գործադրվում է նաև գեղարվեստական մի հայտագիր:

Երգչուհի Լենա Քյուրքճյանը, նվագակցությամբ դաշնակահարուհի Ժպիտ Մարգարյանի, կատարում է Կոմիտաս վարդապետի «Զինար ես» և Ալ. Հարությունյանի «Երգիր ինձ համար» ստեղծագործությունները:

Աշոտ Սաթյանի «Արդյոք գիտե՞ս դու» և Ալեմշահի «Իմ երգ» ստեղծագործությունները կատարում է երգչուհի Ալինա Հովհաննիսյանը՝ նվագակցությամբ դաշնակահարուհի Սոֆի Ռախլինի:

Գեղարվեստական բաժինը եզրափակում է բուլղարահայ ճանաչված դաշնակահարուհի Էմմա Թահմիզյանը, որը հանդես է գալիս Բեթհովենի, Արամ Խաչատրյանի և Աբրահամյանի մի շարք ստեղծագործությունների կատարմամբ՝ յուրահատուկ և փայլուն մեկնաբանմամբ:

Հանդիսության վերջում օրհնության Իր խոսքն է ասում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը:

Նորին Սրբությունը սիրո և գնահատանքի ողջույն և օրհնություն է տալիս Հ. Բ. Ը. Միության տեղական մասնաճյուղի ղեկավարներին և անդամներին:

«Հայ Եկեղեցու սրտին մոտ է Հ. Բ. Ը. Միությունը,—նշում է Վեհափառ Հայրապետը Իր ելույթում,—և պատահական չէ, որ այն միշտ էլ արժանի է եղել Ամենայն Հայոց կաթողիկոսների օրհնությանն ու գնահատանքին և հայ ժողովրդի բարոյական, նյութական աջակցության»:

Հոբելյանական երեկոն ավարտվում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին արտասանված «Հայր մեր»-ով:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ ՎԻԵՆՆԱՅԻ ՀԱՅՈՑ Ս. ՀՌԻՓՍԻՄԵ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Ապրիլի 26-ին, կիրակի: Կրկնազատիկ (Նոր Կիրակէ).

Այսօր, առավոտյան ժամը 11-ին, Վիեննայի հայոց Ս. Հռիփսիմե եկեղեցում հանդիսավոր ս. պատարագ է մատուցում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը:

Ս. խորանում Վեհափառ Հայրապետին սպասարկում են Տ. Նարեկ եպս. Շաբարյանը, Տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը և Տ. Արել ու Տ. Զատիկ աբեղաները:

Ս. պատարագի դպրաց դասի երգեցողությունը կատարում է եկեղեցու նորակազմ քառաձայն երգչախումբը:

Ս. պատարագին ներկա էին կարդինալ Ֆրանց Քյոնիգը, բույր Եկեղեցիների մեծ թվով բարձրաստիճան հոգևորականներ և բազմահարյուր վիեննաբնակ հայ հավատացյալներ:

«Հայր մեր»-ից առաջ ներկա ժողովրդին օրհնության Իր խոսքն է ասում Վեհափառ Հայրապետը:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՇԱՐԿԵՐՈՒԹՅՈՒՆ Ի ՊԱՏԻՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Կեսօրից հետո, ժամը 14-ին, Վիեննայի Եկեղեցական Վարչությունը «Ինտեր-Կոնտինենտալ» հյուրանոցի ճաշասրահում, ի պատիվ Հայոց Հայրապետի, կազմակերպել էր համայնքային ընդունելություն, որին ներկա էին շուրջ 350 հրավիրյալներ, այդ թվում նաև՝ մեծ թվով օտար հոգևորական և աշխարհական պաշտոնական անձինք:

Սեղանի շուրջ առաջինը Վեհափառ Հայրապետի ներկայությունը ողջունում է Վիեննայի Եկեղեցական Վարչության ատենապետ պրն. Աստիկ Աստվածատուրյանը և առաջարկում, որ բոլորը հոտնկայս բաժակ բարձրացնեն Նորին Սրբության կենաց արևշատության և Նրա եկեղեցաշեն ու ազգօգուտ ծրագրերի հետագա հաջողության համար:

Ընդունելության ժամանակ վիեննաբնակ Անտոնայն ընտանիքը 300.000 ավստրիական շիլինգի նվիրատվություն է կատարում՝ ստեղծելու մի հիմնադրամ, որը պետք է ծառայի վիեննացի հայ մանուկների հայեցի և քրիստոնեական դաստիարակության գործին:

Ընդունելության վերջում օրհնության խոսքով հանդես է գալիս Վեհափառ Հայրապետը՝ շեշտելով, որ Աստուծո օրհնությամբ մեր ժողովուրդը կա, ապրում է, աճում է, զարգանում ու բազմանում և՛ Հայաստանի, և՛ արտասահմանի մեջ: Հայաստանյայց Եկեղեցին երջանիկ է՝ իր օրհնությունը և հովանին տարածելու համայն հայության վրա, որպեսզի մայր հայրենիքի և սփյուռքի հայությունը, ձեռք-ձեռքի տված, իրականացնի մեր ազգային բոլոր երազանքները:

Իր խոսքի ավարտին Վեհափառ Հայրապետը «Ս. Գրիգոր Լուսավորիչ» առաջին կարգի շքանշանով պարգևատրում է Մայր Աթոռի բարերար տիար Ազատ Վարդյանին և օրհնության ու գնահատանքի կոնդակ հանձնում պրն. Արամ Ուրուճյանին՝ նրանց ազգանվեր ծառայությունների համար՝ ի պայծառություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի:

Համայնքային ընդունելությունն ավարտվում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով:

ՎԻԵՆՆԱՅԻ ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՈՍ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ՎԻԵՆՆԱՅԻ Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Նույն օրը, երեկոյան ժամը 18-ին, Հայոց Հայրապետը Վիեննայի Ս. Ստեփանոս պատմական, հոյակերտ Մայր տաճարում ներկա է լինում կաթոլիկ ս. պատարագի արարողությանը՝ հրավերովը նույն եկեղեցու ավագերեց Ցախիմ եպիսկոպոսի, որը և մատուցում է օրվա պատարագը:

Ս. պատարագին ներկա էին նաև քույր Եկեղեցիների բազմաթիվ ներկայացուցիչներ և ավելի քան հինգ հազար հայ և ավստրիացի հավատացյալներ:

Ս. պատարագի ընթացքում գերմաներեն լեզվով քարոզ է խոսում Հայոց Հայրապետը (Հիշյալ քարոզը տես «Էջմիածին» ամսագրի սույն համարում, էջ 18):

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ապրիլի 27-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 9.30-ին, Ավստրիայի կրթական և մշակութային նախարարությունը, մինիստր դոկտ. Սինովացի հրավերով, կազմակերպում է ընդունելություն՝ ի պատիվ Հայոց Հայրապետի:

Նորին Սրբության և հարգարժան պարոն մինիստրի միջև տեղի է ունենում ջերմ զրույց՝ բարեկամական մթնոլորտում:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆ

Նույն օրը, ժամը 11-ին, Հայոց Հայրապետը պաշտոնական այցելություն է տալիս սովետական դեսպանատուն, որտեղ հանդիպում է ունենում Ավստրիայի Հանրապետությունում Սովետական Միության արտակարգ և լիազոր դեսպան պրն. Եֆրեմովի հետ:

Նորին Սրբության և մեծահարգ պարոն դեսպանի միջև տեղի է ունենում ջերմ զրույց՝ բարեկամական մթնոլորտում:

*
* *

Կեսօրվա ժամը 12-ին Վեհափառ Հայրապետը այցելում է Ավստրիայի Կայսերական պալատի գանձարան՝ դիտելու համար տեղի արժեքավոր թանգարանային ցուցանմուշները:

*
* *

Ժամը 13.30-ին Վեհափառ Հայրապետը հյուրանոցի Իր հարկաբաժնում ընդունում է այցելությունը Վիեննայի Մխիթարյան միաբանության աբբահայր հայր Գրիգորիս Մանյանի:

*
* *

Ապրիլի 28-ին, երեքշաբթի: Այսօր, երեկոյան, Վեհափառ Հայրապետը Ավստրիայի կրթական և մշակութային նախարարության հրավերով Վիեն-

նայի օպերայի դահլիճում ներկա է լինում Վագների «Թռչող Հոլանդացին» ներկայացմանը:

*
* *

Ապրիլի 29-ին, չորեքշաբթի: Կեսօրվա ժամը 12-ին Ավստրիայի գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ պրոֆ. Հանգերը կազմակերպում է ընդունելություն՝ ի պատիվ Հայոց Հայրապետի:

Հայոց Հայրապետի և գիտությունների ակադեմիայի պարոն պրեզիդենտի միջև շուրջ կես ժամ տեղի է ունենում բարեկամական ջերմ զրույց:

*
* *

Նույն օրը, երեկոյան ժամը 20-ին, «Պրո Օրիենտե» կազմակերպությունը Վիեննայի «Զախար» հյուրանոցի սրահում կազմակերպում է ողջերթի ճաշկերույթ՝ ի պատիվ Հայոց Հայրապետի: Ճաշկերույթին ներկա էին նաև «Պրո Օրիենտե»-ի մի շարք հոգևորական և աշխարհական անդամներ:

Սեղանի շուրջ Հայոց Հայրապետի շնորհաբեր ներկայությունը ողջունում և բարի ճանապարհ է մաղթում «Պրո Օրիենտե»-ի նախագահ դոկտ. Փիֆֆլ Պերչևիչը և բաժակ բարձրացնում Հայոց Հայրապետի կենաց արևշատության համար:

Ընդունելության վերջում խոսք է առնում Հայոց Հայրապետը: Նորին Սրբությունը հայտնում է Իր շնորհակալությունը՝ ուրախության բազմաթիվ պահեր ապրած լինելու համար Վիեննայում, «Պրո Օրիենտե»-ի կազմակերպած հանդիսությունների առթիվ: Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ հաստատում է, թե այս վերջին տասնամյակներին Հայ Եկեղեցին ավելի ու ավելի ջերմ հարաբերություններ է մշակում քույր Եկեղեցիների հետ էկումենիկ ոգով և այդպես էլ շարունակելու է հետայսու, Եկեղեցիների Միության իդեալի իրականացման տեսիլքով: «Հույս ունենք,—ասաց Նորին Սրբությունը,—որ այս ճանապարհի վրա միացյալ ճիգերով Եկեղեցիները պիտի կարողանան որդեգրել բանաձևումներ և սկզբունքներ, որոնք ընդունելի և գործադրելի լինեն բոլորի համար՝ ամեն Եկեղեցի պահելով իր պատմական և իրավական ինքնությունը»:

Հայոց Հայրապետը, հայտնելով Իր լավատեսությունը ապագայի նկատմամբ, ասում է. «Էկումենիկ շարժումը մի ճանապարհ է բացել, որով կարող ենք միմիայն առաջ ընթանալ: Թող Աստված օրհնե և օգնե մեր գործերին և մանավանդ լուսավորե մեր ճանապարհը այժմ և հավիտյան, ամեն»:

Հայոց Հայրապետի պատվին կազմակերպված ջերմ ընդունելությունն ավարտվում է Նորին Սրբության գոհաբանական մաղթանքով:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՎԻԵՆՆԱՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՏ

Ապրիլի 30-ին, հինգշաբթի օրը, վիեննահայ ուսանողական և երիտասարդական միությունը, հայոց եկեղեցուն կից սրահում, կազմակերպում է հանդիպում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հետ:

Հանդիպմանը ներկա էին ավելի քան հարյուր անդամ-անդամուհիներ:

Հանդիպման ընթացքում, հանուն ուսանողական և երիտասարդական միության, Վեհափառ Հայրապետին ուղղյալ ողջույնի հետևյալ խոսքն է արտասանում ատենապետ Նազարեթ Պողոսյանը:

«Վեհափառ Տեր,

Վիեննայի հայ ուսանողական և երիտասարդական միության համար մեծ երջանկություն է, երբ Ձերդ Սրբությունը Իր թանկագին ժամանակեն բաժին հանելով հնարավորություն շնորհեց մեզ, այստեղ ներկայանալ և մեր որդիական խոնարհ հարգանքները մատուցել: Մեր երիտասարդությունը հեռվեն մեծ հիացումով և ակնածանոք ներշնչվում է Ձերդ Սրբության բազմապիսի արժանիքներեն և դեպի Սուրբ Էջմիածինը, հայրենիքի և սփյուռքի հայության հանդեպ ունեցած Ձերդ Վեհափառության անմնան նվիրումեն:

Վիեննայի հայ ուսանողական և երիտասարդական բոլոր անդամների կողմից կհայցեմ Ձերդ Վեհափառության օրհնությունները և աղոթքները, որպեսզի այս օտար, բայց հյուրընկալ հողի վրա հայ մնանք, հոգով և սրտով, հարգենք մեր ազգային ավանդությունները, մնանք հավատարիմ զավակներ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցիին:

Օրհնեցեք մեզ, Վեհափառ Տեր»:

Այնուհետև գործադրության է դրվում գեղարվեստական մի ծրագիր, որի ընթացքում օրիորդ Շողիկ Մարտիրոսյանը հուզումով արտասանում է Ավ. Իսահակյանի «Հայաստանին» բանաստեղծությունը: Դաշնակահար Ավո Գույումջյանը կատարում է «Վաղարշապատի պար» ստեղծագործությունը: Իսկ ավստրիացի Անդրեաս Բենցը կատարում է «Հայ ժողովրդին» ձոնված իր բանաստեղծությունը:

Ապա, խոսք առնելով, պրն. Կարպիս Փափազյանը Վեհափառ Հայրապետին է ներկայացնում ճարտարապետ Ռազմիկ Հարությունյանի նախագծած, Վիեննայի Ս. Հռիփսիմե եկեղեցու բակում կառուցվելիք Եղեռնի հուշարձանի մանրակերտը (Հեղինակ՝ Էդի Թոքմաքջյան):

Երեկոյի վերջում օրհնության Իր խոսքն է ասում Վեհափառ Հայրապետը և մաղթում, որ հայ երիտասարդության հոգում միշտ վառ պահվեն ազգային սրբություններն ու դրանց պահպանման նպաստելու կենդանի գիտակցությունը:

Ապա Նորին Սրբությունը սիրով պատասխանում է հայ երիտասարդների տված մի շարք հարցերին:

Սույն հանդիպումը հայ երիտասարդների ազգային գիտակցական կյանքի համար մի նոր ոգևորիչ և մնայուն ազդակ հանդիսացավ: